



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

«Պատմական հուշարձանների և կուլտուրական մյուս արժեքների պահպանության նկատմամբ հոգատարությունը Հայկական ՍՍՀ քաղաքացիների պարտքն ու պարտականությունն է»:

(ՀՍՍՀ սահմանադրություն, հոդված 86)

Հովհաննավանքի համալիրը գտնվում է Աշտարակի շրջանի համանուն գյուղում, Քասախ գետի անդնդախոր ձորի եզրին: Ըստ ավանդության, վանքը հիմնադրվել է IV դ. սկզբին, երբ Գրիգոր Լուսավորիչը կառուցել է համալիրի հնագույն շենքը՝ միանավ բազիլիկը: Այն վերակառուցվել է 573 թ., երբ փայտե ծածկը փոխարինվել է քարե թաղով, և 1652 թ., որի ընթացքում աղավաղվել են վաղ միջնադարի հայ ճարտարապետությանը բնորոշ այս հուշարձանի նախնական ձևերը: Համեմատաբար լավ է պահպանվել եկեղեցու արևմտյան ճակատը՝ պայտածև կամարներով երեք լուսամուտով, մուտքով և արտաքին



Ընդհանուր տեսքը հյուսիս-արևելքից

Ընդհանուր տեսքը հարավից




պլունարաբնի որսնակամարներով: Վերջին վերակառուցման ժամանակ պատերի շարվածքում օգտագործվել են վանքի այլ շենքերի քարեր ևս: Օրինակ, արևելյան ճակատին պահպանվել է Վաչուտյան իշխանական տոհմի զինանշանը պատկերող հարթաքանդակը (արժիվը՝ ճանկերում աղավկի):

Միանավ բազիլիկին արևմուտքից կից է հատակագծում բեկված ձև ունեցող մի շինություն, որը վանքի մի այլ վերակառուցված հնագույն շենքն է, ենթադրաբար՝ տապանատունը: Այստեղ պահպանվել են XII—XIII դդ. մի շարք արձանագրություններ, որոնցից հատկապես կարևոր են պուլյաց արքայադուստր Ծուշանիկի (1176 թ.) և Զաքարե ու Իվանե Զաքարյան իշխանների (1200 թ.) արձանագրությունները:



Ժամատան արևմտյան ճակատի մանրամաս

Ժամատան գմբեթի
ճեքքին տեսքը



Վանքի գլխավոր՝ Ս. Կարապետ եկեղեցին 1212—1221 թթ. կառուցել է իշխան Վաչե Վաչուտյանը: Վաչեի մահից հետո շինարարությունն ավարտել է նրա որդին՝ Քուրդը: Այս հույակերտ հուշարձանն ունի Հալաստանի վանքային եկեղեցիներին բնորոշ՝ ներսից խաչաձև, չորս անկյուններում երկհարկ ավանդատներով, արտաքինից ուղղանկյուն հորինվածք: Գմբեթը և հարավային պատը քանդվել են 1918 թ. երկրաշարժի ժամանակ, սակայն, հին լուսանկարներով հնարավոր է պատկերացնել դրանց տեսքը: Գմբեթի տասերկու նիստանի թմբուկը զարդարված էր զույգ կիսապուրակներով կամարաշարով, իսկ հարավային ճակատն ունեցել է եռանկյունաձև

խորշեր, զույգ կիսագլանիկներով շրջանակ ունեցող կենտրոնական լուսամուտ և նրա նկատմամբ խաչաձև դասավորված ու հետը տրամատավորված գոտիներով միացած կլոր, ոչ մեծ պատուհաններ:

Արևմտյան դուռն ունի հեռանկարային դասավորություն ունեցող կիսապուրակներով ճուխ մշակված շքամուտք և զարդարված է նուրբ բուսական քանդակներով ծածկված ութանկյուն աստղերով: Մուտքի բարավորի վրա գտնվում է «Իմաստուն և հիմար կույսերի» ավետարանական ստակը պատկերող հարթաքանդակը: Կենտրոնում Քրիստոսն է, որը աջ ձեռքով օրհնում է «իմաստուն», իսկ ձախով վանում «հիմար» կույսերին:



Ժամատան արևմտյան շքանտրթի վերևի լուսամտի մանրամաս

Սակայն հարթաքանդակը հետաքրքրական առանձնահատկությամբ տարբերվում է կանոնիկ պատկերագրությունից՝ կույսերի փոխարեն տղամարդիկ են պատկերված:

Ժամատունը կից է գլխավոր եկեղեցուն և բազիլիկին արևմուտքից (1250 թ. կառուցել է իշխան Քուրդ Վաչուտյանը): Ծեկըը պատկանում է XII—XIII դ.դ. Հայաստանի գավիթների ու ժամատների տարածված քառապլուստի տիպին և գլխա-

վոր եկեղեցու նկատմամբ կառուցված է ապիմետրիկ, որովհետև կառուցված է երկու եկեղեցիներին միաժամանակ սպասարկելու համար (դրանց արևմտյան մուտքերը բացվում են ժամատան մեջ): Բազմազան են ծածկի հատվածների իրականացման ձևերը՝ ստալակոտիտներով, խաչվող գծերով, քարե հարթ ստատուաղներով: Ուշագրավ է կենտրոնական հատվածի ծածկը զանգակատան տաներկու պլուստի ոտտոնդով, որը

Հայաստանի նույնատիպ կառուցվածքների շարքում իր տեսակի մեջ եզակի է և ունի ամենամեծ երդիկը (6,5 մ տրամագծով): Ռոտունդը, հալանաբար, կառուցվել է 1274 թ.՝ ժամատան նորոգման ընթացքում: Այդ հիմնավորվում է եկեղեցու նակատների նկատմամբ նրա օղակաձև հիմնագոտու ցածր դիրքով: Ժամատան արևմտյան նակատը զարդարված է յուրօրինակ լուծված դեկորատիվ կամարաշարով՝ աջ կողմն ունի երեք, իսկ ձախը՝ չորս թուխք: Հետաքրքրական է արևմտյան շքանտրթը՝

կազմված քանդակագարդ մակերեսով ուղղանկյունուց և նրա մեջ ներգծված կամարակապ շրջանակներից: Ինքնատիպ է լուծված նաև կրկնակի լուսամուտը, որը շքանտրթի շարունակությունն է կազմում:

Վանքը շրջապատված է բուրգերով ամրացված պարիսպներով, որը XII դ. վերջին կառուցել է Նանա թագուհին: Վանքի տարածքում գեղաքանդակ խաչքարեր կան:

Արձանագրություններում և պատմիչների մոտ հիշատակված հյուրատունը,

Գլխավոր եկեղեցու քանդակագարդ բարավորը





Հարթարանդակ՝ թռչուններով

գրատունը և դարոցը, ինչպես նաև բնակելի և տնտեսական շենքերը չեն պահպանվել: Համալիրի տարածքում կանգուն է վաղ միջնադարի մի հետաքրքրա-

կան բուշակոթող (վերականգնված է XIV դ.)՝ բազմաստիճան հիմքի վրա բարձրացող չորս կիսազլաններից կազմված սյան ձևով:

ԳՄԻ 63. 3(22) 6

Հ. 863

**Հարթարան Մուրադ Մարգարի
ՀՈՎՀԱՆՆԱՎԱՆՔ**

Асратян Мурад Маркарович

ОВАННАВАНК

(На армянском языке)

Издательство «Айтастан»

Ереван — 1984

05505040000

Հ 701 (01) 84 պատվեր

© ՀՍՍՀ պատմության և կուլտուրայի
բուշարձանների պահպանության ընկե-
րություն, 1984

Մասն. խմբագիր՝ **Վ. Մ. Հարությունյան**
Խմբագիր՝ **Է. Գ. Շահնազարյան**

Նկարիչ՝ **Յ. Ա. Ասատրյան**

Գեղ. խմբագիր՝ **Ս. Ս. Մկրտչյան**

Տեխ. խմբագիր՝ **Կ. Գ. Սարգսյան**

Վերստողող սրբագրիչ՝ **Լ. Ս. Սահակյան**

ИБ 2/4

Հանձնված է շարվածքի 3.09.1984 թ.:
Ստորագրված է տպագրության 20.12.
1984 թ.:

Թուղթ՝ «Վավնապատ» 0,35 պպմ. մամ.,
հրատ. 0,36 մամ.: Ֆորմատ՝ 70×108^{1/32}:
Տպարանակ՝ 10000: Պատվեր 2497:
Վ.Ֆ 09514: Գինը 10 կոպ.:

«Հայաստան» հրատարակչություն, Երե-
վան—9, Տերյան 91:

Издательство «Айтастан», Ереван-9,
ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլի-
գրաֆիայի և գրքի առևտրի գործերի
պետական կոմիտեի № 1 տպարան,
Երևան, Ալավերդյան 65:

Типография № 1 Госкомитета Арм.
ССР по делам издательств, полигра-
фии и книжной торговли. Ереван,
ул. Алавердяна, 65.